ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<09>> ----------հուլիսի----------2025թ. N ՄՈ/663-Ա

ք. Արմավիր

«ՔԱՐԱԿԵՐՏԻ N1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՇԽԵՆ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Աշխեն Մինասյանի 2025 թվականի հուլիսի 7-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Քարակերտի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աշխեն Մինասյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 15 աշխատանքային օր և 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա

հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 15 աշխատանքային օր՝ 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 22-ը ներառյալ՝ 30 աշխատանքային օր տևողությամբ:

2. Աշխեն Մինասյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Քարակերտի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Քարակերտի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ռուզաննա Կուրղինյանին:
3. «Քարակերտի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ռուզաննա Կուրղինյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 22-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Աշխեն Մինասյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 25-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ